

ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ



ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2016



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ԵՎ ԱՎԱՆԴԱՏՈՒՆԵՐԻ ԹՎԻ
ԴԻՆԱՄԻԿԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԱՎԱՆԴՆԵՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ



ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմնադրամի անվանումն է

1. Հայերեն՝ Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամ,
Անգլերեն՝ Deposit Guarantee Fund,

Ռուսերեն՝ Фонд гарантирования возмещения вкладов:

2. Հիմնադրամի հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Վ. Սարգսյան 6,

3. Կայք՝ www.adgf.am

4. Էլեկտրոնային հասցե՝ info@adgf.am

5. Հեռախոսահամարներ՝ +37410 583514, +37410 592664

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Հիմնադրամի կառավարումն իրականացվում է Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի և Հիմնադրամի տնօրենի կողմից:

2016թ. վերջի դրությամբ Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն ունեցել է հետևյալ կազմը.

Խորհրդի նախագահ	Արթուր Զավադյան	ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ
Խորհրդի անդամ	Արթուր Ստեփանյան	ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի անդամ
Խորհրդի անդամ	Կարեն Թամազյան	ՀՀ Ֆինանսների նախարարի առաջին տեղակալ
Խորհրդի անդամ	Արշալույս Մարգարյան	ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի պետական պարտքի կառավարման վարչության պետ
Խորհրդի անդամ	Գագիկ Մինասյան	ՀՀ Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ
Խորհրդի անդամ	Սամվել Ջզմաչյան	Հայաստանի բանկերի միության նախագահ
Խորհրդի անդամ	Աշոտ Օսիպյան	«Արարատբանկ» ԲԲԸ վարչության նախագահ, գործադիր տնօրեն

Հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Հիմնադրամի տնօրենը, որը նշանակվում է Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից:



Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի տնօրենն է Հերմինե Հարությունյանը:

ՀԻՄՆԱՊՐԱՄԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Հիմնադրամի հիմնական գործառույթներն են՝

երաշխիքային վճարների հավաքագրումը, Հիմնադրամի միջոցների կառավարումը, երաշխավորված ավանդների, ավանդատուների թվի և այլ վերլուծությունը, Օրենքով սահմանված երաշխիքային վճարները չվճարած բանկերի նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու նպատակով Կենտրոնական բանկին միջնորդություններ ներկայացնելը՝ բանկերի ներկայացրած հաշվետվությունների արժանահավատությունը պարզելու նպատակով Կենտրոնական բանկի կողմից ստուգումներ անցկացնելու համար, երաշխավորված ավանդների հատուցումը կազմակերպելը, ավանդների երաշխավորման և հատուցման գործընթացի լուսաբանումը:

ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ

Հիմնադրամի գործունեությունը կարգավորվում է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) և այլ օրենքներով:

Հիմնադրամը՝ հանդիսանալով Ավանդներ ապահովագրողների եվրոպական ֆորումի լիիրավ անդամ, հետևողական է ավանդների ապահովագրման ոլորտի միջազգային զարգացումներին և հնարավորինս տեղայնացնում է ավանդների ապահովագրման արդյունավետ համակարգերի հիմնարար սկզբունքների կիրառումը: Ավանդներ ապահովագրողների եվրոպական ֆորումին անդամակցելու շրջանակներում աշխատանքներ են տարվել Հիմնադրամի գործունեությունը կարգավորող իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու ուղղությամբ:

2016 թվականի մարտի 1-ից ուժի մեջ են մտել «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» օրենքի փոփոխությունները: Օրենքում կատարված փոփոխությունները վերաբերում են հատուցում ստանալու եղանակներին, հատուցման ժամկետների կրճատմանը, ավանդների և խնդրահարույց պարտավորությունների հաշվանցին, միացող բանկերում ավանդների երաշխավորման

սահմանաչափին, տարբերակված երաշխիքային վճարների կիրառմանը: Փոփոխությունների նպատակն է ավանդատուների շահերի լիարժեք պաշտպանության և համակարգի նկատմամբ վստահության բարձրացման համար մեխանիզմների ստեղծումը, հատուցման ողջ գործընթացի արդյունավետության բարձրացումը: Մասնավորապես.

- Սահմանվել է ավանդատուի կողմից հատուցում ստանալու համար ինչպես գրավոր, այնպես էլ էլեկտրոնային եղանակով պահանջ ներկայացնելու հնարավորությունը:
- Սահմանվել է ավանդատուի կողմից ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ հատուցում ստանալու հնարավորությունը՝ իր կողմից նշված հաշվին փոխանցման միջոցով:
- Կրճատվել է ավանդների հատուցման գործընթացի տևողությունը: 2016-2018 թթ. հատուցման դեպքը տեղի ունենալու պահից 20-րդ աշխատանքային օրվանից սկսած հատուցումն իրականացվելու է ավանդատուի կողմից հատուցման պահանջը ներկայացնելու պահից առավելագույնը երեք աշխատանքային օրվա ժամկետում: 2018 թվականից հետո սահմանված ժամկետը համապատասխանաբար նվազելու է մինչև 15 աշխատանքային օր, այնուհետև 10 աշխատանքային օր, իսկ 2023 թվականից՝ 7 աշխատանքային օր: Սահմանված ժամկետները հիմնված են միջազգային փորձի վրա և էականորեն կրճատում են հատուցման գործընթացի տևողությունը: Անցումային ժամանակաշրջանի մեխանիզմի կիրառումը բխում է Հիմնադրամի և ֆինանսական կայունության պատասխանատու մարմինների համատեղ աշխատանքների կատարելագործման անհրաժեշտությունից, ինչը թույլ կտա կարճաժամկետ հատվածում ապահովել հատուցումների անխոչընդոտ իրականացում:
- Երկարաձգվել է այն առավելագույն ժամանակահատվածը, որի ընթացքում ավանդատուն կարող է հատուցման պահանջ ներկայացնել. գործող 1 տարին երկարաձգվել է՝ սահմանվելով 3 տարի:
- Սահմանվել է ավանդատուի միևնույն բանկում ունեցած ավանդի և խնդրահարույց պարտավորության հաշվանցի հնարավորությունը: Մինչդեռ, նախկին կարգավորման համաձայն ավանդատուի ավանդից նվազեցվում էր բանկի նկատմամբ ունեցած պարտավորությունն ամբողջությամբ:

- Սահմանվել է առավելագույն ժամանակահատված, որի ընթացքում միացող բանկերից յուրաքանչյուրում ներդրված ավանդը պետք է դիտել որպես առանձին ավանդ:
- 2016 թվականին ներդրվել է տարբերակված պարբերական երաշխիքային վճարների համակարգը, որի շրջանակներում բացի Օրենքով սահմանված 0.05 տոկոսից Կենտրոնական բանկի որոշմամբ կարող է կիրառվել այլ տոկոսադրույք: Այսպիսով, բարձր տոկոսադրույքով ներգրավված արտարժույթային ավանդների նկատմամբ ներկայումս կիրառվում է այլ տոկոսադրույք: Համակարգի ներդրումը կգսպի բանկերի կողմից բարձր տոկոսադրույքով արտարժույթային ավանդների ներգրավումը, որն ազդեցություն կունենա արտարժույթով վարկերի տոկոսադրույքների վրա: 2016 թվականի վերջին գրանցված արդյունքները փաստում են, որ տարբերակված երաշխիքային վճարների ներմուծումն արդեն իր ազդեցությունն է ունեցել արտարժույթային ավանդների տոկոսադրույքների վրա:

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Հիմնադրամի միջոցները ձևավորվել են ՀՀ առևտրային բանկերի կողմից վճարվող երաշխիքային վճարների գումարներից, դրանց կառավարումից ստացված եկամուտներից, ստացված վարկային միջոցներից:

Հիմնադրամի միջոցների կառավարումն իրականացվում է Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատվող և ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից համաձայնեցվող միջոցների կառավարման քաղաքականության և ուղենիշային պայուսակի հիման վրա: Հիմնադրամի միջոցների կառավարման քաղաքականությունը սահմանում է Հիմնադրամի միջոցների կառավարման հիմնական նպատակները և սկզբունքները: Հիմնադրամի միջոցների տեղաբաշխման առաջնային չափանիշը տեղաբաշխվող միջոցների անվտանգությունն ու իրացվելիությունն է:

Հիմնադրամի միջոցները ներդրվում են բացառապես վերադարձման բարձր հուսալիություն ունեցող ֆինանսական ակտիվներում: 2016թ. ընթացքում Հիմնադրամի միջոցների հիմնական մասը ներդրվել է ՀՀ պետական միջնաժամկետ պարտատոմսերում, որոնք պատմականորեն հանդիսանում են ՀՀ արժեթղթերի շուկայի առավել իրացվելի հատվածը: Հաշվետու տարվա ընթացքում փաստացի կուտակված

եկամտաբերությունը գերազանցել է Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված ուղենիշը:

Հիմնադրամի վարչական ծախսերը, գործառնական ծախսերը և կապիտալ ներդրումների ծրագիրն իրականացվում են Հիմնադրամի միջոցների հաշվին: Հիմնադրամի տարեկան վարչական ծախսերը, գործառնական ծախսերը և կապիտալ ներդրումների ծրագիրը հաստատվում է Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից: Օրենքի համաձայն՝ Հիմնադրամի վարչական ծախսերի և կապիտալ ներդրումների գումարը չի կարող գերազանցել բոլոր ՀՀ առևտրային բանկերի՝ նախորդ տարվա բանկային ավանդների միջին օրական ցուցանիշի 0.03 տոկոսը:

2016թ. վարչական ծախսերի և կապիտալ ներդրումների ծրագրի առավելագույն մակարդակը կարող էր կազմել 331,310.2 հազար ՀՀ դրամ: Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից բոլոր ծախսերի հաստատված գումարը կազմել է 151,300 հազար ՀՀ դրամ, որից փաստացի կատարված գործառնական ծախսերը կազմել են 49,283 հազար ՀՀ դրամ, վարչական ծախսերը՝ 54,524 հազար ՀՀ դրամ, իսկ կապիտալ ներդրումների գումարը՝ 960 հազար ՀՀ դրամ:

Հիմնադրամի գործունեության վերաբերյալ հաշվետվությունը և անկախ աուդիտորական կազմակերպության եզրակացությունը հրապարակվում է www.azdarar.am հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, իսկ ծախսերի վերաբերյալ տեղեկությունները տեղադրվում են Հիմնադրամի ինտերնետային կայքում:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ԵՎ ԱՎԱՆԴԱՏՈՒՆԵՐԻ ԹՎԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ

Հիմնադրամի կողմից իրականացվել են Հիմնադրամի միջոցների, բանկային ավանդների¹, ավանդատուների թվի վերաբերյալ վերլուծություններ: Վերլուծությունները կատարվել են ՀՀ բանկերից եռամսյակային պարբերականությամբ ստացվող հաշվետվությունների հիման վրա:

Ինչպես նախորդ տարիներին, 2016թ. ևս գրանցվել է բանկային ավանդների և ավանդատուների թվի աճ:

¹ Ավանդի սահմանումը համապատասխանում է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի բանկային ավանդի սահմանմանը

2016թ. վերջին, ֆիզիկական անձանց բանկային ավանդների (բացառությամբ Օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված չերաշխավորված ավանդների) գումարի աճը 2015թ. վերջի համեմատ կազմել է 13%:

2016թ. վերջին, 2015թ. վերջի համեմատ երաշխավորված ավանդ ունեցող ավանդատուների թիվն աճել է 4.62%-ով: Այս ցուցանիշի աճի տեմպը, նախորդ տարվա համեմատ, նվազել է շուրջ 3%-ով:

2016թ. վերջի դրությամբ երաշխավորված ավանդ ունեցող ավանդատուների թվում երաշխավորված ավանդի սահմանաչափը չգերազանցող ավանդ ունեցող ավանդատուների կշիռը կազմել է 98.24%: 2016թ. նշված ցուցանիշի առավելագույն չափը գրանցվել է երկրորդ եռամսյակի վերջին, որը կազմել է 98.32%:


ՀՀ բանկային համակարգում միայն ՀՀ դրամով ավանդներ ունեցող ավանդատուները կազմում են ՀՀ բանկային համակարգի գերակշռող մասը, ընդ որում այս ցուցանիշի առավելագույն չափը գրանցվել է 2016թ. վերջին և կազմել է 85.89%:

2016թ. վերջին, 2015թ. վերջի համեմատ ֆիզիկական անձանց ՀՀ դրամով ավանդների կշիռն ավելացել է շուրջ 3.5%-ով և կազմել է 29.54%:


2016թ. վերջին, 2015թ. համեմատ ժամկետային ավանդների կշիռը բանկային ավանդներում նվազել է շուրջ 0.5%-ով և կազմել է 80.48%: Ժամկետային ավանդներին է բաժին հասնում բանկային ավանդների կառուցվածքի գերակշռող մասը: Դրանց հետևում են բանկային հաշիվներն ու ցպահանջ ավանդները, այնուհետև բանկի կողմից թողարկված անվանական արժեթղթերը և այլ պարտավորությունները:

2016թ. վերջին, ավանդների միջին մեծությունը կազմել է 683,921 ՀՀ դրամ, որը 2015թ. վերջի համեմատ աճել է շուրջ 8%-ով:


Երաշխավորված ավանդ ունեցող ավանդատուների թիվը 2012-2016թթ. վերջի դրությամբ (հազար)




**Երաշխավորված ավանդ ունեցող ավանդատուների թիվը
2016թ. եռամսյակների վերջի դրությամբ (հազար)**




**2016թ. վերջի դրությամբ միայն դրամային, միայն արտարժութային և միաժամանակ
դրամային և արտարժութային ավանդներ ունեցող ավանդատուների կշիռները**




**Ֆիզիկական անձանց կողմից ներդրված գումարների դրամային և արտարժութային
գումարների համամասնությունը 2012-2016թթ. վերջի դրությամբ**




Միայն դրամային, միայն արտարժույթային և միաժամանակ դրամային և արտարժույթային ավանդներ ունեցող ավանդատուների երաշխավորված ավանդների համամասնությունը 2012-2016թթ. վերջի դրությամբ



2016 վերջի դրությամբ ավանդների կառուցվածքը



2016թ. ընթացքում մեկ ավանդատուի ավանդի միջին մեծությունը 2016թ. եռամսյակների վերջի դրությամբ (ՀՀ դրամ)



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնադրամը համագործակցում է միջազգային տարբեր կազմակերպությունների հետ: 2006թ. նոյեմբերին Հիմնադրամը պաշտոնապես անդամագրվել է Ավանդներ ապահովագրողների եվրոպական ֆորումին (EFDI): Հանդիսանալով վերջինիս լիիրավ

անդամը, Հիմնադրամը մասնակցում է կազմակերպության տարեկան ժողովներին, խորհրդի անդամների ընտրություններին և ծրագրվող միջոցառումների քննարկումներին: Հիմնադրամը համագործակցում է նաև Ավանդներ ապահովագրողների միջազգային ասոցիացիայի (IADI) հետ:

2016թ. ընթացքում ևս Հիմնադրամի աշխատակիցները մասնակցել են EFDI-ի և IADI կողմից կազմակերպված սեմինարներին, կոնֆերանսներին և տարբեր աշխատանքային հանդիպումներին:

2016թ. հունիսի վերջին Ղրղաստանում Հիմնադրամի աշխատակիցները մասնակցել են Ավանդներ ապահովագրողների միջազգային ասոցիացիայի (IADI) Եվրասիական տարածաշրջանային կոմիտեի կողմից կազմակերպված միջազգային սեմինարին:

Սեմինարի ընթացքում ելույթ են ունեցել նաև միջազգային փորձագետներ:

Սեմինարի հիմնական թեմաներն էին՝ ավանդներ երաշխավորողների դերը ֆինանսական խնդիրներ ունեցող բանկերի կարգավորման գործընթացում, ճգնաժամի պայմաններում ռիսկերի կառավարումը և համագործակցությունը ֆինանսական կայունության համար պատասխանատու մասնակիցների միջև, ինչպես նաև Ֆինանսական ճգնաժամի հետ կապված խնդիրները:

Հայաստանի ավանդների երաշխավորման հիմնադրամի կողմից ներկայացվել է Հիմնադրամի պատրաստվածությունը ֆինանսական ճգնաժամային իրավիճակներին: Բացի այդ, ներկայացվել է ճգնաժամի դեպքում ֆինանսական կայունության համար պատասխանատու մյուս մասնակիցների հետ Հիմնադրամի համագործակցության շրջանակը, «Ավանդների ապահովագրման արդյունավետ համակարգերի հիմնական սկզբունքներ»-ին Հայաստանի երաշխավորման համակարգի համապատասխանության գնահատականը և Հայաստանի ավանդների երաշխավորման համակարգի բարելավման հետագա ծրագրերը:

Ավանդների ապահովագրման եվրոպական ֆորումին անդամակցության շրջանակներում Հիմնադրամը մասնակցել է Ջերսիի Ավանդների ապահովագրման հիմնադրամի կողմից կազմակերպված «Ավանդների ապահովագրման արդյունավետ համակարգերի հիմնարար սկզբունքները և բանկերի անվճարունակության կարգավորումը» թեմայով սիմպոզիումին: Միջոցառման շրջանակներում Մեծ Բրիտանիայի, Շվեյցարիայի, Ֆրանսիայի, Նիդերլանդների և Ավանդների ապահովագրման միջազգային ասոցիացիայի ներկայացուցիչների կողմից ներկայացվել են ավանդներ ապահովագրողների առաջ ներկայումս ծառայած մարտահրավերները, ճգնաժամային պատրաստվածության կարևորությունը, բանկերի անվճարունակության կարգավորման նոր մեխանիզմների կիրառման վերաբերյալ հարցերը, ապահովագրման և կարգավորման ֆոնդերի համատեղման նպատակահարմարությունը, ինչպես նաև ապահովագրման և կարգավորման եվրոպական դիրեկտիվների հակասությունները:

Ս.թ. սեպտեմբերի 28-30-ը Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի տնօրեն Հերմինե Հարությունյանն ու ավագ տնտեսագետ Անահիտ Շաքարյանը

մասնակցեցին Լիտվայի Վիլնյուս քաղաքում տեղի ունեցած Ավանդներ ապահովագրողների եվրոպական ասոցիացիայի տարեկան ընդհանուր ժողովին և դրան զուգահեռ կազմակերպված միջազգային համաժողովին: Համաժողովի առաքելությունն ավանդների ապահովագրման եվրոպական համակարգի դրական և բացասական կողմերի բացահայտումն էր, այդ թվում՝ կենտրոնացված համակարգի առավելություններն ու թերությունները:

Հիմնադրամը հանդիսանում է EFDI-ի հանրային իրազեկման հանձնաժողովի անդամ, որի շրջանակներում 2016թ. Հիմնադրամի աշխատակիցները մասնակցել են հանձնաժողովի երկու աշխատանքային հանդիպումներին: Հանձնաժողովի նպատակն է՝ նպաստել EFDI անդամ երկրների միջև հանրային իրազեկման ոլորտի արդյունավետ փորձի փոխանակմանը, հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, որը կարևոր գործոն է հանրության վստահության բարձրացման և ֆինանսական կայունության ապահովման համար:

EFDI հիմնադրվել է 2002թ. Եվրոպական Հանձնաժողովի աջակցությամբ:

EFDI-ին անդամակցում են 56 լիիրավ անդամներ:

IADI-ը հիմնադրվել է 2002թ.-ին: IADI-ին անդամակցում է 83 կազմակերպություն 77 երկրներից:

ԱՎԱՆԴՆԵՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնադրամն իր գործունեությամբ նպաստում է ֆինանսական համակարգի նկատմամբ վստահության բարձրացմանը ավանդների երաշխավորման և հատուցման գործընթացի լուսաբանման միջոցով:

Լուսաբանման և իրազեկման գործիքների արդիականացման նպատակով Հիմնադրամը մշտապես ուսումնասիրում է ոլորտի առանձնահատկությունները և միջազգային փորձը: Ոլորտի բարելավմանը նպաստում է Ավանդներ ապահովագրողների եվրոպական ասոցիացիայի հանրային իրազեկման կոմիտեին անդամակցությունը:

2016թ. ընթացքում Հիմնադրամը մասնակցել է կոմիտեի կողմից կազմակերպված 4 հանդիպումներից երկուսին՝ Վիլնյուս և Բուդապեշտ քաղաքներում: Հանդիպումների ընթացքում ներկայացվել էին տարբեր երկրներում հատուցման դեպքի ընթացքում հասարակայնության իրազեկման հետ կապված միջոցառումները, ՁԼՄ-ների հետ աշխատանքների տեսակները, դրանց դրական և բացասական ազդեցությունը ինչպես ընթացիկ գործունեության, այնպես էլ հատուցման գործընթացի կազմակերպման վրա: Հիմնադրամի կողմից հանդիպումների ընթացքում ներկայացվել է հանրության իրազեկման և ֆինանսական կրթության ոլորտում իր գործունեությունը և համագործակցությունը ոլորտի շահառուների հետ:

2016թ. ընթացքում Հիմնադրամը համագործակցել է մի շարք հեռուստա-ռադիո ընկերությունների հետ՝ թիրախավորելով բնակչության խմբերը արդյունավետ իրազեկման նպատակով: Հիմնադրամի կողմից ակտիվացրել է ֆեյսբուք և թվիթթեր սոցիալական կայքերի միջոցով լուսաբանման գործընթացը:

2016թ. Հիմնադրամի կողմից հայտարարվել էր ավանդների երաշխավորման համակարգի լուսաբանմանն ուղղված ինֆոգրաֆիկայի մրցույթ՝ «Խնայում ենք բանկի միջոցով» և «Ավանդը խնայողության ապահով տեսակ է» թեմաներով, որին մասնակցեցին ուսանողներ Հայաստանի Հանրապետության տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններից: Հոկտեմբերի 31-ին՝ որը ավանդաբար նշվում է որպես Խնայողությունների միջազգային օր, Հայաստանի Բանկերի Միությունում տեղի ունեցավ Խնայողությունների օրվան նվիրված կլոր սեղան և մրցույթի արդյունքների ամփոփում: Թվով 4 հաղթողների մրցանակներ հանձնեցին Ավանդների երաշխավորման հիմնադրամը, ՀՀ Բանկերի Միությունը, «Արարատբանկ» ԲԲԸ-ն, «Հայֆինանսբանկ» ՓԲԸ-ն:

2016թ. ընթացքում Հիմնադրամը շարունակական սեմինար-դասընթացներ է անցկացրել ՀՀ Ռուս-սլավոնական, Հայաստանի ազգային ազրարային, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարաններում, որին ներկա են գտնվել 200-ից ավելի մասնակիցներ:

Հիմնադրամն ակտիվ համագործակցում է նաև ՀՀ կենտրոնական բանկի այցելուների կենտրոնի հետ, որտեղ ինտերակտիվ ցուցադրումների միջոցով այցելուները ծանոթանում են նաև Ավանդների երաշխավորման համակարգին և Հիմնադրամի գործունեությանը, ստանում են Հիմնադրամին վերաբերող տպագիր նյութեր և գրասենյակային պարագաներ:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

2012թ.-ից Հիմնադրամն անդամակցում է նաև ՀՀ-ում ֆինանսական կրթման ազգային ռազմավարության մշակման և իրագործման հանձնաժողովին, որի ներքո իրականացված միջոցառումները հնարավորություն են տալիս ներկայացնել ավանդների երաշխավորման համակարգը ըստ թիրախավորված խմբերի, ինչպես նաև իրականացնել ֆինանսական գրագիտությանն ուղղված մի շարք միջոցառումներ:

2016թ. Հիմնադրամն ակտիվ մասնակցություն է ունեցել «Իմ ֆինանսների ամիս» ծրագրին: Մասնավորապես. տարվա ընթացքում Հիմնադրամը ֆինանսական գրագիտության բարձրացմանն ուղղված սեմինարներ է իրականացրել մոտ 180 աշակերտների և ուսուցիչների համար՝ Երևան քաղաքի և մարզային դպրոցներում: Ծրագրի ներքո ՀՀ կենտրոնական բանկում Հիմնադրամը ֆինանսական թեմաներով բաց



սեմինարների շարք է իրականացրել ՀՀ ԲՈՒՀ-երի ուսանողների համար: Իր մասնակցությամբ Հիմնադրամը ակտիվորեն աջակցել է ծրագրի այլ միջոցառումներին, ինչպիսիք են ֆինանսական թեմաներով բանավեճեր, ինտելեկտուալ խաղեր և այլն:

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնադրամի գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը: Հիմնադրամի ընթացիկ գործունեության նկատմամբ հսկողությունն իրականացնում է Հիմնադրամի ներքին վերստուգիչը:

Հիմնադրամի 2016թ. գործունեության աուդիտորական ստուգումն իրականացվել է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի կողմից: